**Համաձայնագիր – 1**
**01.08.2017թ. կնքված N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2017/1 ծածկագրով գնման պայմանագրում փոփոխություններ կատարելու մասին**

ք.Երևան «18» 10 2017թ.

ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեն, այսուհետ՝ «Պատվիրատու», ի դեմս ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար Ա.Սահակյանի մի կողմից, և «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ-ն, այսուհետ՝ «Կատարող», ի դեմս ընկերության տնօրեն Ա.Խաչատրյանի մյուս կողմից, երկուսը միասին այսուհետ՝ Կողմեր, ղեկավարվելով ՀՀ քաղաքացիական օրենսդրությամբ և հիմք ընդունելով 01.08.2017թ. կնքված N ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2017/1 ծածկագրով գման պայմանագրի /այսուհետև՝ Պայմանագիր/ 7.13-րդ կետը կնքեցին սույն համաձայնագիրը հետևյալի մասին.

**1.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ**

1.1 Կողմերը որոշեցին Պայմանագրի 7.13 կետին համապատասխան հաստատել ֆինանսական պարտավորությունների կատարման ժամանակացույցը՝ համաձայն կից հավելվածի /կցվում է/:

1.2 Սահմանել, որ Պատվիրատուն պայմանագրի N 1 հավելվածով նախատեսված մատուցված ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն համաձայնագրի հավելվածով սահմանված ժամկետներում, բայց ոչ ուշ քան 2017 թվականի դեկտեմբերի 20-ը:

**2.ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ**

2.1 Սույն համաձայնագիրը ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և հանդիսանում է Պայմանագրի անբաժանելի մասը: Պայմանագրով նախատեսված կողմերի իրավունքների և պարտականությունների կատարման պայման է հանդիսանում պայմանագիրը ՀՀ ֆինանսների նախարարության կողմից հաշվառված լինելու հանգամանքը:

2.2 Սույն համաձայնագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնության ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

2.3 Սույն պայմանգրում կողմերի չնշված պարտավորությունները թողնվում են անփոփոխ:

2.4 Սույն համաձայնագիրը և հավելվածը կազմված է հայերեն լեզվով 2 /երկու/ օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

**3.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ և ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ**

| ՊԱՏՎԻՐԱՏՈՒ | ԿԱՏԱՐՈՂ |
| --- | --- |
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե | «ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ |
| ք. Երևան, Մ. Խորենացի 3,7 | ք. Երևան, Դ.Անհաղթի 19/1-70 |
| ՀՎՀՀ 02647057 | «Հայէկոնոմբանկ» ԲԲԸ |
| ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն | Հ/Հ 163288639103 |
| Հ/Հ 900013574018, Հ/Հ 900013202016 | ՀՎՀՀ 01006813 |
| ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար՝ | տնօրեն՝ |
| Ա.Սահակյան ____ /ստորագրություն/ | Ա.Խաչատրյան ____ /ստորագրություն/ |
| Կ.Տ. | Կ.Տ. |

Հավելված
Հաստատված է 01.08.2017թ. կնքված
ՀՀ ԿԱ ՊԵԿ-ԳՀԾՁԲ-2017/1 ծածկագրով
գնման պայմանագրի փոփոխությամբ

## ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

| Ծառայության | | | | | | | |
|---|---|---|---|---|---|---|---|
| Հ/Հ | գնումների պլանով նախատեսված միջանցիկ ծածկագիրը՝ ըստ ԳՄԱ դասակարգման (CPV) | Բյուջետային ծախսերի տնտ. դասակ. հոդվածը | Ծառայության անվանումը | վճարումները նախատեսվում է իրականացնել 2017 թ. ՀՀ ԿԱ ՊԵԿ արտաբյուջետային միջոցների հաշվին՝ ըստ ամիսների, այդ թվում | | | |
| | | | | Հոկտեմբեր | Նոյեմբեր | Մինչև 2017 թ. դեկտեմբերի 20-ը | Ընդամենը Տարի |
| 1 | 79531100/1 | 4231 | Գրավոր թարգմանության ծառայություններ-1 | 180 000 | 180 000 | 180 000 | 180 000 |
| 2 | 79531100/1 | 4231 | Գրավոր թարգմանության ծառայություններ-2 | 150 000 | 150 000 | 150 000 | 150 000 |
| 3 | 79531100/1 | 4231 | Գրավոր թարգմանության ծառայություններ-3 | 90 000 | 90 000 | 90 000 | 90 000 |

** Վճարման ենթակա գումարները ներկայացված են աճողական կարգով:*

**Պ Ա Տ Վ Ի Ր Ա Տ Ո Ւ**
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտե
ք. Երևան, Մ. Խորենացի 3,7
ՀՎՀՀ 02647057
ՀՀ ՖՆ աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900013574018, Հ/Հ 900013202016
ՀՀ ԿԱ պետական եկամուտների կոմիտեի աշխատակազմի ղեկավար՝

**Ա.Սահակյան** ____________
/ստորագրություն/
Կ.Տ.

**Կ Ա Տ Ա Ր Ո Ղ**
«ԱՐԹ ՔՈՆՍԱԼԹԻՆԳ» ՍՊԸ
ք. Երևան, Դ.Անհաղթի 19/1-70
«Հայէկոնոմբանկ» ԲԲԸ
Հ/Հ 163288639103
ՀՎՀՀ 01006813
տնօրեն՝

**Ա.Խաչատրյան** ____________
/ստորագրություն/
Կ.Տ.